

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարադատաբեր դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Маяк“

ՄԱՅԿ

Խմբագրատանը բաց է առաջատան 10-2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար յետոյում են
խաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՆ

Ելի մի պարագայում կանանց համար:—Ն է ր-
քին տեսնում թիւն: Նամակ երեւոյց: Նամակ
Ս. Պետերբուրգից: Նամակ խմբագրին: Ներքին
լուրեր:—Արտաքին տեսնում թիւն: Զէյթու-
նի անցքեր:—(Մշակի) հեռագիրներ:—Յայտարա-
րութիւններ:—Բանասիրական: Տխուր
երկայթ:

ԵԼԻ ՄԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Այժմեան ժամանակում, երբ
մեր հասարակական կեանքի ձե-
ւերը աւելի և աւելի բաղադրեալ
են դառնում, հասարակական գոր-
ծին չը մասնակցող անձների թի-
ւը օրից օր պակասում է: Անցան
այն ժամանակները, երբ ընտա-
նիքի մէջ մի աշխատող միջոց էր
տալիս ընտանիքի մնացած ան-
դամներին ոչինչ չանել և այդ
համարվում էր կատարելապէս
օրինաւոր: Այժմեան ժամանա-
կում աշխատանքը դարձել է մի
անհրաժեշտ պահանջ բոլոր չքա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԻՈՒՐ ԵՐԵՒԱՆԻ

Այս տարին, որ անա անցնում է, հայոց ազգի
և պատմութեան համար մի նշանաւոր տարի է,
վասնի որ հայոց ազգը այս թւականին ինքն էլ
չը սպասելով էքսպրոսիտով մտաւ նորապեան
ընտանցութիւններին, նրանց խորհրդարաններին,
մատենաներին, վեհապետներին և միախառնեցին
խոստմանց մէջ: Դարձեալ յիշենք որ ինքն էլ
հայոց ազգը, ընտ չէր սպասում մի այսպիսի
սիրապիտ: Դեհ, կոյրի ուղան էլ ինչ է իթէ
նչ երկու աչք, իսկ հայոց ազգը, որ այսքան
զարեւր ապրել է միմիկով լոկ արտասու-
ղով, ախ ու վախով, լալական խօսքերով չէր
կարող սպասել ուրիշ երջանկութեան, քան թէ
իր ազգի վերածնութիւնը: Բայց դժբաղդաբար
այդ վերածնութիւնը չեղաւ լիովին Ղազարոսի
յարութիւն, այլ միայն ապացոյց թերահաւատ-
ներին, որ յարութեան հրաշքը մեր ժամանակն էլ
կարելի է, վասնի որ հոգում պառկած Ղազարոսը—
հայոց ազգը, աշխարհիս ամեն գլխից սկսեց ձգ-
վալ, գոռալ և աղաղակել որ ինքը դու չէ ևս մե-
ռած, այլ սպասում է օգնութեան, որ պատառ-
տէ իր փաթեթանքը և դուրս թռչէ գերեզմա-
նից: Բայց, աւաղ, թշուառ հանգամանքները
այնպէս եկան, որ վեցդարեան մեռելային վի-
ճակից դու չարունակել իր ստորեկրկնայ գե-
րութիւնը մինչև որ Աստուած մի բարի հրեշտա-
կի բերանով չուղարկէ նրան աւետիք և հրաման
վերջ տալ իր դժբան կեցութեանը: Արդարեւ,
հայոց ազգին պատահածը այնպիսի մի բան էր,
որ զարմացրեց նչ թէ մենակ իրան, այլ ևս նը-
րանց որ միանգամայն անտարբեր էին դէպի
որ և իցէ այսպիսի երևոյթ, բայց ինչ սովորաբար
մեզ այդ զարմանք հէնց հիացական, հէնց բերի-

ւորների համար, լինէին նրանք
մարդիկ թէ կանայք, իսկ նիւ-
թապէս ապահովածների համար,
որոնք բաւականաչափ կրթութիւն
են ստացել, աշխատանքը դարձել
է մի բարոյական պահանջ:

Իթէ մի անգամ վճռված է
կանանց աշխատանքի խնդիրը,
վճռված է նրա բնական պահան-
ջը, ամեն կին, իր կարողութեան
չափ, պէտք է աշխատի փախել
կանանց աշխատանքի ամենատա-
րածված ձևերից, այլ պէտք է
հետազօտի և գտնի իր համար և
փորձի մի նոր շաւիղ: Այդպիսով
ցոյց տալով իր անձի օրինակով
որ կինը ընդունակ է կատարել
այդ նոր աշխատանքը, նա ապա-
գայում բաց է անում մնացած
կանանց համար գործունէութեան
նոր ասպարէզներ:

Անկասկած, որքան ընդարձակ,
որքան բազմատեսակ կը լինի պա-
րապմունքների ընտրութիւնը, այն-
քան աւելի հաւանական կը լինի,

որ կանանցից իւրաքանչիւրը աւելի
հետադարձեալ կը գտնի իր կո-
չումը, աւելի դիւրութեամբ կը
գտնի իր ընդունակութիւններին,
իր պատրաստութեանը, իր կեն-
սական այս կամ այն պայմաննե-
րին համեմատ մի գործունէու-
թիւն:

Այդ պատճառով մենք՝ աւե-
լորդ չենք համարում առաջարկել
մեր կարծիքը այդ ընտրութիւնը
հարստացնելու համար, աւելորդ
չենք համարում նաեւ այստեղ
կանանց աշխատանքի դեռ ևս չը
հետազօտված մի ճիւղի մասին,
որ, մեր կարծիքով, համապա-
տասխանում է թէ կնոջ բնաւո-
րութեանը, առհասարակ, և թէ
մասնաւորապէս մեր երկրի պայ-
մաններին:

Եւ առաջարկում եմ կրթված
կանանց զբաղվել գիւղատնտեսու-
թեամբ. այդ տեսակ գործունէու-
թեան կողմն է իմ բոլոր համա-
կրութիւնը: Աւ իմանալով որքան

չեմ սրտով մեր ժամանակակից
երիտասարդութիւնը սկսեց պա-
րապել մարդկային աշխատանքի
այդ ճիւղով, որքան բազմաթիւ
ցանկացողներ յայտնվեցան վերջն
ժամանակները բնութեան հետ
ձեռք ձեռքի տուած աշխատելու,
ինձ վրա, որպէս կնոջ, կարող են
կասկած տանել, որ ես հակված
եմ դէպի նորաձեւութիւնները,
դէպի մօզա: Բայց ես խորին
կերպով համոզված եմ, որ բաց
առնելով տեղի և ժամանակի զա-
նազան պայմանները, այդ աշխա-
տանքը ամենայնպէս անհրաժեշտ
է կանանց համար: Այդտեղ կինը
կարող է օգտուէտ լինել, չը դուրս
գալով, մինչև անգամ դարերով
նրան գծադրած գործունէութեան
շրջանից:

Իսկապէս տնային տնտեսու-
թիւնը, որով պարապում է և որ
սիրում է իւրաքանչիւր կինը, նոյն
գիւղատնտեսութիւնն է, միայն
աւելի փոքր դիրքով: Չանազա-

րեսիր, ձախ ձեռքով դու սրբիւր այդ թուրք,
իսկ աղօլ վեր առ գետնից առաջը չարած կօ-
պէկը: Սիրիւր դու կօպէկը և երբ մարդիկ վրադ
չառ կը հաչեն, ձեռքիդ երեստեղ ազգաբեր ու
բարոյի, իսկ ծածուկ կանիւր, պոկիւր ու գողա-
ցիւր, մէկ խօսքով ոչինչ միջոց մի խնայիւր որ
դու լինես արժանաւոր որդի քո հօրը, որը սկը-
սեց իր գործունէութիւնը հինգ կօպէկով
և վերջացրեց հինգ հոյակապ տնտեսութիւն
Դու կարծում ես, ընթերցող, որ այս ամենը
վերաբերվում է միայն անուս, աղէտ ու խաւար
կարգին, ոչ, սխալվում ես, այս ամենը յատուկ
է և զարգացածին, և մասնագէտին և պարի-
ցիտին: Ապացոյցի համար վեր առ մի տեղ
հայ պոէզիցիտիկա, եթէ նա ունէ երեք ներ-
կայացուցիչ, որոնցից երկուսը հրաշքով պատա-
հել են զազափարի տէր և անձնուրաց մարդիկ,
անշուշտ մէկը նոցանից է մի նախանձառ, չա-
համով ու աղէտ մարմնավաճառ, որը փորձելով
զրականական հանգէս դուրս գալ ձգտում է
կամ իր անախառնութիւնը կերակրել ազգային
գործիչ ընդունակով, կամ թէ չանել որ և իցէ
մէկի սիրտը, որից նա ունէ ներթական կախում
ու անկալութիւն: Եւ զարմանալի է արդեօք
որ այդպիսի մէկը չը լինի ոչ անխոնջ մեղու և
նչ եռանդոտ մէկ վսեմ զազափարի, այլ կին-
առ, հարստահարող, փոքր ու փորձող միա-
միտների անփորձութեան... Այո, ընթերցող, մեր
մէջ իղէպական գործը մինչև անգամ, այդ
սուրբ գործը մտքը, հոգի և սրտի զարգացման
—պոէզիցիտիկան դիմաւորված է ևս որ
և իցէ պոէզի չափաւորութեամբ, կեղտոտ նպա-
տակով և ստոր շարժառիթով: Եւ կարծիք է հա-
ւատալ ու յուսալ մեր արթնութեան, բարոյա-
կան կերպարանափոխութեան, յառաջադիմու-
թեան: Ո, ինչ դժուար! Ուրեմն... ուրեմն Ղազա-
րոսը պիտի պառկէ գերեզմանում անյայտ, անմը-
խիթար ու անկերվ մինչև որ Աստուած խաղա-
կը մոռանայ նրան և յարութիւն կը տայ միայն
այն ժամանակ երբ ընդհանուր դատաստանի կը
կանչվի բոլոր մարդկութիւնը: Տխուր երեւոյթ...

Ուսիւցի

նութիւնը չափի, ընդարձակութեան մէջն է, և նոյնպէս նրա մէջ, որ ընդարձակ տնտեսութեան կառավարիչ կը լինի մասնագիտական կերպով զարգացած կին տնտես, իսկ տնտեսական արդիւնները ոչ թէ միայն կը բաւականացնեն տնային պահանջներին, բայց և կը հարստացնեն, կամ գոնէ կապահովացնեն ընտանիքը:

Երկարաբանութիւն չեմ անի ընտելեան շրջանում աշխատանքի վայելչութեան և պոէզիայի մասին, հեռու բոլոր խեղդող, ճնշող տարրերից, կը թողնեմ մի ուրիշ անգամի համար էլ աշխատանքի պրօզայի վրա խօսելու, թէ որքան արդիւնաւոր են գիւղատնտեսութեան զանազան ճիւղերը՝ կաթնային տնտեսութիւնը, թրուչունների պահելը, բանջարանոցները և այլն, և մանաւանդ որքան շահաւետ են գիւղատնտեսութեան այդ բոլոր ճիւղերը միասին, երբ մինի արդիւնները ծածկում և լրացնում են միւսների ծախսերը:

Կասեմ միայն որ գուզընթաց գիւղական ուսուցչուհու և մանկաբարձ կնոջ, գիւղատնտես կինը կարող էր մի մեծ օգնութիւն տալ ժողովրդին, ցոյց տալով իր գործունէութեամբ խելացի և շահաւետ աշխատանքի մի շղարհիկ օրինակ:

Բայց ինձ կասեն. այդ բոլորը լաւ է, բայց նախ՝ կարող է արդեօք մի կըթված կին հրաժարվել քաղաքային աղմուկի կեանքից և նուիրել իրան առանձնացած կեանքին և երկրորդ՝ որտեղ կարող է նա ստանալ մասնագիտական ուսումը:

Առաջին հարցին ես կը պատասխանեմ՝ այո՛, կարող է: Իր բնաւորութեամբ կինը սիրում է ընտելութիւնը, իսկ աշխատանքի օգտակարութիւնը և արդիւնաւորութիւնը մնացածը կանեն: Գիւղական ուսուցչուհիները միթէ չեն ընտելանում իրանց դրութեանը:

Ինչ որ վերաբերվում է երկրորդ հարցին, պէտք է խոստովանվել, որ Ռուսաստանում առհասարակ բազմաթիւ չեն գիւղատնտեսական հիմնարկութիւններ և չը գիտեմ որքան յօժար կը լինեն եղածներն էլ թոյլ տալ կանանց ուսանողների թւում ընդունված լինելու: Բայց դորանով գործը չը պէտք է արգելիլ: Նախ և առաջ պէտք է որ յայտնված լինի ցան-

կութիւնը, որ յայտնվեն կարապետներ, ինքնուսներ, որոնք կառաջնորդվեն պատրաստ աշխատանքով, սեփական փորձով և որոնք հասնելու են շղարհիկ հետևանքների տոկոսն աշխատութիւնների շնորհով:

Մեզանում գիւղական ուսուցչուհու առաջին տիպը, ինքնուս ուսուցչուհի էր, գրեթէ անգրագետ, որ սկսեց դասեր տալ, կամ կարօտութենից դրդված, կամ որպէս սիրող: Երբ մի անգամ յայտնվեցաւ կնոջ կողմից աշխատելու ցանկութիւնը, նա ընթացաւ այդ ճանապարհով և յայտնեց իր ընդունակութիւնը գէպի այդ աշխատանքը, այն ժամանակ ծնունդ առան և բարձրագոյն դպրոցները, որոնց նպատակն էր մատակարարել կանանց սեփական մասնագիտական ուսումը:

Համարձակվում ենք յուսալ որ և մեր առաջարկած աշխատանքի նոր ճիւղի վերաբերութեամբ նոյնը կրկնվելու է:

Օրիորդ Բ-եան

ՆԵՐՔԻՆ ՏՅՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

12 դեկտեմբերի

Այս երկրորդ անգամ է որ պատահմամբ բազմեմ ունենում երևանում հայ թատրոնատիրաց խմբի ներկայացումներին ներկայ գտնվելու. իմ կարծիքով երևանը այդ մասին շատ բաղդաւոր է, որ ունի իր սեփական թատրոնական դահլիճ իր յատուկ բեմով, որը ժողովրդեան կրթութեան միջոցներից մէկն է: Զը նայելով որ դահլիճը այնքան ընդարձակ է, այնուամենայնիւ շատ կանոնաւոր է դիւրեղով: Գահիճը կը պարունակէ իր մէջ ընդամենը 200-ի չափ մարդիկ. բեմը նոյնպէս ընդարձակ է, բեմական դարձերը համեմատելով երևանում 1870 թւի եղած զարդերի հետ այժմ շատ լաւ են, դէկորացիաները շատ չըքել են և յարմարաւոր: Զգեստները մասամբ լաւ են և մասամբ միջակ, յուսալի է որ հետգիւտել թատրոնը կը լրացնի իր թերութիւնները: Թատրոնական թէ բեմը և թէ դահլիճը բոլոր պարագաներով չունի նշանաւոր պակասութիւն. թատրոնը ունի բաւական նստարաններ, աթոռներ և թիկնաթոններ: Ներկայացման օրը դահլիճը զարդարված է լինում դանդաղ մուգաներով և լուսաւորվում է երկու ջահերով և մի քանի լապտերներով: Բեմական վարագոյնները և դեկորացիաները շատ չափ չունեն փոխվում որոնց թէ կանոնաւոր ել և էջութիւնը և թէ դեղեցիկ ներկայները շատ լաւ են և ուշադրութեան արժանի: Առաջին վարագոյնի վրա նկարած է Արագած լեռը իր մոտակայ լեռներով և բլուրներով: Արագած լեռան ձիւնապակի դադաթը մի առանձին շքեղութիւն էր տալիս դահլիճին: Երկրորդ վարագոյնի վրա նկարած է Արամազդի կամարակալ գեղեցիկ մեհանը և հոյակապ մեհանի խորում բազմացած է Արամազդի պատկերը ամբողջ վրա: Երրորդը վրա Արարատեան դաշտը գեղեցիկ ծառերով և խոտոշուքի դետերով և որի յետքում երևում է մեծ և փոքր Մասիսը նոյնպէս ձիւնապակե դադաթով: Զորորդի վրա Մեծատիւր աւերակները իր քանդակած պարիսպներով և բուրգերով: Հինգերորդի վրա դժուր զարնուրեկ տեսարանը լիք էր դեկորով, որի վրա կարծես անդադար այրվում է գեհնի անհանգիստ հուրը, ունի նաև գեղեցիկ պալատներ, փողոցներ, անտառներ և պանդոկներ նկարած: Երկու բեմական բոլոր պարագաները մեծ մասամբ անթերի էին: Այս էլ չը պէտք

է մտանալ որ գործադրվում է բեմագլխան գոյնգոյն հրեր, կայծեր և երկնային գուռցը. բացվում է արքայութիւն և երբեմն բարձրանում է հոգին գէպի երկնք և իսկոյն անհետանում:

Բայց մի անհերքելի պակասութիւն կայ դերասանների խմբի մէջ, այն է, որ նրանք աշխատում են որքան կարելի է չուտ չուտ ներկայացումներ տալ և հասարակութենից մի քանի շահի խել, ներկայացումը լաւ էր կամ վատ էր այդ նշանակութիւն չունի: Ընդունելութեան վրա ուշադրութիւն դարձնող չը կայ. 1 բուրժանոց առման գնողը կարողանում է 3 բուրժանոց աթոռի վրա նստել, իսկ 3 բուրժանոց աթոռի վրա կանգնել, հարցնող չը կայ: Գերասանը իր դերը ներկայացնելուց յետոյ միտ էրեւում և չինձու բեմերով ու մորուքով հանդիսականաց մէջ գալ նստելը ամօթ կամ պակասութիւն չէ համարում: Ամեն դերասան որ դերը կանխում է ընդունում է և ներկայացում ժողովրդեան առաջ, լաւ էր կամ վատ էր այդ իրեն փոյթ չէ, նրա պարտքն է մաքուր բեման անել և վարժ խօսել, աչքերը և ակամփներն էլ լարել դէպի յաշարարը: Օրինակ. «Սանդուխտը» ներկայացնում է մի դարգացած տիկին, իսկ «Երուսաղէմ» Պարսկաստանի մի դարվիշ: «Շաւարշ» մի գիւղացի սառնարիւն և քանար թարգմանայ, թաղէս առաքելը մի ճոթածակ հասակը 3 վերջի, որը բեմի վրա մեծերը ալ ու ձախ տարածելով և առամները ամուր իրար սեղմելով կարծես թէ իրան արձաններ էր կամենում ցոյց տալ ժողովրդեան:

Այդ թատրոնական դիտար և անհերքելի պակասութիւններն են. մենք խորհուրդ կը տայինք թատրոնական խմբին իբրեւ հայ և եղբայր որ նախագոյն թատրոնի կազմակերպութիւնը ուղղէին ինչպէս հարկն էր և ապա ներկայացնէին: Թատրոնը չը պէտք է ճանաչել միայն իբրեւ նիւթական միջոց, այլ ժողովրդեան կրթութեան տաճար:

պարհների ուսումնարանը: Այդ տեղի ուսանողները, թուով մօտ 130 հոգի ղեմեցին յարակցութեան ճանապարհների միջնորդին մի ուղեւորով, որի մէջ զլուաւորապէս խնդրում էին ազատել բանտարկութիւնից իրանց բժիշկ ընկերներին: Պ. միջնորդի առաջարկութեամբ ընտրվեցան մի քանի հոգի ամբողջ ցանկութիւնը նրան յայտնելու: Սրանցը նա հասկացրեց, որ ինքը չէ կարող ընդունել որ և ինչ ինչպիսի ապօրինի ամբողջ և թէ ուսանողները իրանց խնդրել պէտք է հասցնեն նրան իրանց անմիջական վարչութեան (գիրեկտորի) միջնորդութեամբ:

Երեկ այդ խառնակութիւններն են պատճառը, որ կառավարութիւնը ստիպվեցաւ ձեռք դարկել մի քանի խիստ միջոցներին. Ժողովները, որոնք առաջ արգելված էին փողոցներում և հրապարակներում, այժմ արգելվում են և բարձրագոյն ուսումնարանների շինութիւնների մէջ, և նրանց վարչութեան հրահրեղով ոստիկանութիւնը պարտաւոր է միջամտել այդ տեսակ ժողովները խափանելու: Բացի դրանից ոստիկանութեանը իրաւունք է տրվում բաց անել իւրաքանչիւր նամակ, որ նա կապակած լին կամարէ: Անկողնապահ կերպով նկարագրելով իրողութիւնները այնպէս, ինչպէս նրանք եղել են, մենք միայն մի հարց թոյլ կը տանք մեզ առաջարկել, թէ ուսումնարանները իր այդպիսի դեմոստրացիաներով օգուտ է բերում իր հայրենիքին, թէ չեաւ:

Ն. Լ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Բագու, 12 դեկտեմբերի

«Մշակ» 14 համարում յայտնել էի, որ այստեղ ստորագրութիւն ենք բացել «Արարատեան Ընկերութեան» օգտին, և ինչպէս խոստացել էի վերջում հայել ներկայացնել, ահա ուղարկում եմ ձեզ նամակիս հետ արքունական բանկի փոխադրական ապահովագիր № 791 երկու հարիւր հինգ րուբլի... Խնդրեմ ստանալ և հասցնել յիշեալ Ընկերութեան գործադիր ժողովին, և բարեհաճել հաւատարակելու նուիրատուների ազգանունները:

Մենք ստորագրութիւն բացել ենք երկու եղանակով. առաջին, ինչպէս այլ քաղաքներում միանուազ նուիրատուութիւններ են արել, իսկ երկրորդ, մշտապէս անդամ լինելով վճարում են տարեկան 6 րուբլի: Նա չեմ կարող խորին շնորհակալութիւնս չը յայտնել այս վերջին եղանակով անդամակցող պարոններին, որոնց բարի նպատակն է շարունակ օգնել իրանց թրուաւ եղբայրներին: Գուցէ որ այլ բաղմանայ քաղաքներում ևս կը շարունակեն իրանց տուրքն այս եղանակով և այն ժամանակի Ընկերութիւնը ունենալով մի յուսալի աղբիւր այս կողմից աւելի խրախուսված առաջ կը տանէ Ընկերութեան գործը: Մշտական նուիրատուներ, թողէս առաջ քահանայ Բուդաղեանց վրձարեց 1878 թ. տուրք 6 ր., պատուանոց քաղաքացի Գեորգ Լալայեանց վճարեց 1878—79 թ. երկու տարվայ տուրք 12 ր., պ. Սամուէլ Գով. Բաղդեանց 12 ր., Սահակ բէկ Գուրգէնեանց 12 ր., պ. Առաքել Մատուրեանց 1878 թ. տուրք 6 ր., պ. Գովհանէս Միրզաբեգեանց 6 ր., պ. Գրիգոր Թումայեանց 6 ր., պ. Գալովա Փիրդատեանց 6 ր., գեր. Սէրգէյ Վարչանեանց 6 ր., պ. Պողոս Սարգսեանց 6 ր., պ. Ալէքսանդր Նազարեանց 6 ր., պ. Ներսէս Կրասիկ Նիկեանց 6 ր., պ. Ստեփան Տէր-Օհանեանց 6 ր., պ. Աւետիս Ղարաբեգեանց 6 ր., պ. Մհերստ Մելիքեանց 6 ր., պ. Մնացական Պատուականեանց 6 ր., պ. Թովմաս Ամիրեանց 6 ր., գեր. Աւետիք Մամիկոնեանց 6 ր., պ. Վազար Մայրեանց 6 ր., պ. Միրտիչ Շահկեղանեանց 6 ր., Գրիգոր Միրզաբեգեանց 6 ր., Աբրահամ Սարուսեանց 6 ր., Գրիգոր Գրիգորեանց 6 ր., Միշտանուազ նուիրատուներ: Ընկ. Աղամանց և Վազեանց 3 ր., պ. Բալասան Գրիգորեանց 3 ր., Գովհանէս Բաբաբեգեանց 2 ր., Անյայտ օմն 2 ր., Աւագ Տէրմեհեանց 2 ր., Սահակ Միքայելեանց 1 ր., Վասիլի Պողոսեանց 3 ր., Գառնուր Թաթեանց 3 ր., Նիկողայ Վարդապետեանց 1 ր., Աւագ Վարդապետեանց 1 ր., Գեորգ Միրզաբեգեանց 2 ր., Ալէքսանդր Վարդապետեանց 1 ր., Պողոս Խանդավորեանց 3 ր., Պողոս Բաբեգեանց 2 ր., Գովհանէս Գրիգորեանց 3 ր., Օհանյան Շահկեղանեանց 2 ր., Նիկողայ Ռաֆայելեանց 3 ր., Գովհանէս Մայրեանց 1 ր., Միքայել Մարգարեանց 3 ր., Աւետիք Մամիկոնեանց 2 ր., Եգոր Բալասանեանց

